

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Միջազգային փորձը վկայում է, որ արտարժութային տատանումները հետևանք են մի շարք գործոնների, որոնք էլ իրենց հերթին որոշակի ազդեցություն են թողնում տարբեր երկրների տնտեսական իրավիճակների վրա: Հատկապես մեծ է ազդեցությունը ինչպես զարգացող, այնպես էլ թույլ զարգացած երկրներում, քանի որ արտարժույթով օգնությունները (տրանսֆերտները) այդ երկրների բնակչության հիմնական եկամուտների զգալի մասն են, որոնք ձևավորվում են արտասահմանում ապրող հարազատների և բարեկամների փոխանցումների հաշվին: Հետևապես ՀՀ-ում ԱՄՆ դոլարի արժեզրկման գործընթացի, նավթի գների տատանումների և վերջին տարիներին քաղաքական ցնցումների պայմաններում (ԱՄՆ-Իրաք պատերազմը, ՌԴ-վարած կոշտ քաղաքականությունը և այլն) կարևոր նշանակություն են ձեռք բերում ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության ընտրության հիմնախնդիրները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից գների կայունությանը նախապատվություն տալն ամրագրվել է 1996թ. «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ սահմանադրությամբ, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի արժույթային քաղաքականության սկզբունքների մասին» 1996թ. հուլիսի 19-ի թիվ 122 որոշմամբ, երբ դրամը սահմանվել է որպես ազատ լողացող արժույթ^{1,2}:

Այս ռեժիմի ընտրությունը ինքնանպատակ չի եղել և ունեցել է որոշակի նախապայմաններ: ԿԲ-ի առջև դրված էր դրամավարկային քաղաքականության նպատակների դասական «ետրնորանքը», որը մշտապես կանգնած է ցանկացած երկրի իշխանությունների առջև, և ենթադրում է, որ կենտրոնական բանկը կարող է ընտրել ու արդյունավետ կերպով միաժամանակ ապահովել քաղաքականության հետևյալ երեք նպատակներից միայն երկուսը.

- փոխարժեքի ամրագրում կամ վերջինիս նեղ միջանցքի ապահովում,
- գների կայունություն և կապիտալի ազատ շարժ:

Հայաստանի նման փոքր տնտեսություն ունեցող երկրում ներմուծման բարձր ծավալների ֆինանսավորման, տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումների, ինչպես նաև հետագայում տնտեսական զարգացման ապահովման համար կարևոր է կապիտալի ներհոսքը: Հետևաբար որպես միջին ժամկետ նպատակ ԿԲ-ն ընդունեց ընթացիկ և կապիտալ հաշիվներով գործարքների աստիճանական ազատականացման մասին որոշումը, ներքին արժույթային շուկայի ստեղծումն ու զարգացումը և բանկային համակարգի միջազգային ֆինանսական համակարգերին ինտեգրվելը:

Հաջորդ խնդիրը փոխարժեքի համապատասխան ռեժիմի ընտրությունն էր: Այսպես եթե ԿԲ-ն որպես նպատակ ամրագրեր փոխարժեքը և վերահսկեր վերջինիս վարքագիծը, կնշանակեր, որ այն վերցնում է փոխարժեքի ռիսկն իր վրա: Սա մի կողմից մեծացնում է փոխարժեքի վարքագծի կանխատեսելիությունը տնտեսավարող սուբյեկտների համար և ապահովագրում նրանց փոխարժեքի տատանումներից, սակայն նման ռեժիմը երկիրը դարձնում է ավելի խոցելի

¹ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը (փոփոխություններով և լրացումներով), Երևան, 1996:

² ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով և լրացումներով), Երևան, 1995:

արտաքին ազդեցությունների նկատմամբ (օրինակ՝ երբ գործընկեր երկրների գնաճն ավտոմատ փոխանցվում է ներքին շուկա): Այդ պայմաններում երկիրը բաց է սպեկուլյատիվ գրոհների դեպքում, որը խիստ խնդրահարույց է միջազգային պահուստների ցածր մակարդակ ունեցող երկրների համար:

Հայաստանի մյուս անցումային շրջանի տնտեսություն ունեցող երկրի համար վտանգավոր և խիստ ծախսատար կլինեք ընդունել փոխարժեքը՝ որպես դրամավարկային քաղաքականության նպատակ: Միջազգային փորձը ցույց է տվել, որ փոխարժեքի ամրագրումը հիմնականում արդյունավետ է հիպերգնաճի դեմ պայքարի փուլում, ինչը Հայաստանն արդեն գրեթե հաղթահարել էր 1995 թվականին, և հետագա փուլն արդեն վերաբերում էր երկարաժամկետ ֆինանսական կայունության համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծմանը: Մյուս կողմից գների կայունությունը կարևոր էր տնտեսությունում գնաճային սպասումների կայունացման, դրամի նկատմամբ վստահության մեծացման և ֆինանսական հուսալիության ապահովման համար: Վերը նշված խնդիրները հաշվի առնելով՝ 1996թ. ՀՀ ԿԲ-ն պաշտոնապես հայտարարեց փոխարժեքի ազատ լողացող ռեժիմի ընտրության մասին՝ ամրագրելով գների կայունությունը որպես վերջնական նպատակ:

Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ամենամյա հրապարակվող «Արժույթային կարգավորումներ և արժույթային սահմանափակումներ» հաշվետվության մեջ տրված սահմանման՝ «Ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությունը նշանակում է, որ փոխարժեքը որոշվում է շուկայում, և արժույթային շուկային ցանկացած պաշտոնական միջամտության նպատակը, ամենից առաջ, փոխարժեքի փոփոխությունները չափավորելը և չափազանց մեծ տատանումները կանխելն է, քան թե դրա մակարդակը սահմանելը»¹:

Դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է դրամավարկային քաղաքականության ընտրված ռազմավարությունից և վերջինիս իրագործման նպատակով Կենտրոնական բանկի գործողությունների հետևողականությունից:

Ընդհանուր առմամբ, դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքը բնութագրվում է որոշակի փուլային հաջորդականությամբ, որն ամփոփ կերպով կարելի է ներկայացնել՝ դրամավարկային քաղաքականության գործիքներ, դրամավարկային քաղաքականության գործառնական նպատակ, դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակ, դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակ՝ շրթայի տեսքով:

Դրամավարկային քաղաքականության իրականացման շրթայական կառուցվածքի վերջին երկու տարրերը՝ դրամավարկային քաղաքականության միջանկյալ և վերջնական նպատակները, բնութագրում են դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, իսկ առաջին երկու տարրերը՝ դրա իրագործման մարտավարությունը²:

Շուկայական հարաբերությունների պայմաններում դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակները դուրս են ՀՀ Կենտրոնական բանկի անմիջական վերահսկողությունից, և դրանց վրա բանկի ազդեցությունը կրում է անուղղակի բնույթ: Սակայն դրամավարկային քաղաքականության գործիքների միջոցով Կենտրոնական բանկը վերահսկում է այդ քաղաքականության գործառնական և միջանկյալ նպատակների վարքագիծը, որն էլ արտացոլվում է բանկի վերջնական նպատակի ցուցանիշում:

Դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքի այս շրթայական կառուցվածքում առանցքային է միջանկյալ նպատակի դերը:

Միջանկյալ նպատակի ընտրության հարցում Կենտրոնական բանկը հենվում է մի շարք չափանիշների վրա, որոնց կարևորությունը պայմանավորված է դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակի հետ դրանց համապատասխանեցվածությամբ: Դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակի փոփոխությունները պետք է անմիջական

¹ Արժույթի միջազգային հիմնադրամի պաշտոնական ինտերնետային կայք, www.imf.org:


² ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայք, www.cba.am:

արտացոլում ստանան վերջնական նպատակի վարքագծում: Դա հնարավորություն կտա Կենտրոնական բանկին, հետևելով միջանկյալ նպատակի վարքագծին, հասնելու վերջնական նպատակին:

Միջանկյալ նպատակը պետք է Կենտրոնական բանկի համար վերահսկելի լինի, այսինքն՝ Կենտրոնական բանկը պետք է հնարավորություն ունենա ազդելու միջանկյալ նպատակի վարքագծի վրա:

Ազգային տնտեսություններում դրամավարկային քաղաքականության «անվանական խարսխի» դեր կատարում են փողի ագրեգատներն ու փոխարժեքը, իսկ 1990-ական թվականների սկզբից՝ նաև գնաճի կանխատեսվող մակարդակը, որոնցից էլ կախված ձևավորվում են դրամավարկային քաղաքականության ռազմավարությունները:

Դրամավարկային քաղաքականության այս կամ այն ռեժիմի ընտրությունը կախված է նրանից, թե հայեցողականության (discretion) և պարտավորվածության (commitment) ինչ հարաբերակցություն է ընտրում ՀՀ Կենտրոնական բանկը: Հայեցողականությունը ենթադրում է վերջնական նպատակի, վերջինիս մակարդակի, գործառնական նպատակների, դրամավարկային քաղաքականության գործիքների ընտրության ազատություն (goal, target, operational independence): Պարտավորվածությունը ենթադրում է վերջնական նպատակի, դրա մակարդակի, գործառնական նպատակի հստակ սահմանում և վերջնական նպատակի ձեռքբերման համար գործիքների ընտրության ազատություն (operational independence):



Գծանկար 1. ԱՄՆ դոլարի, եվրոյի փոխարժեքների և գնաճի փոփոխության դինամիկան Հայաստանի Հանրապետությունում, 2000 – 2007թթ.¹:

Փողի ագրեգատների նպատակադրումը ենթադրում է փողի ագրեգատների քանակական սահմանափակումներ վերջնական նպատակի՝ գների կայունության ձեռքբերման համար: Դրամավարկային քաղաքականության փուլերն, ըստ նպատակների, հետևյալն են՝ դրամավարկային քաղաքականության գործիքներ-փողի բազա-փողի զանգված-գնաճ: Սա բավականին արդյունավետ ռազմավարություն է անցումային շրջանում գտնվող տնտեսությունների համար, որտեղ անխուսափելի են առաջարկի, պահանջարկի խառնաշփոթ իրավիճակները, և հնարավոր չէ գնահատել տնտեսական աճի համար գնաճի բեկումնային մակարդակը, որից բարձրի դեպքում գնաճն արդեն նվազեցնում է տնտեսական աճի տեմպերը: Փողի ագրեգատների մակարդակի կառավարման միջոցով հնարավոր է լինում ճկուն կերպով արձագանքել տնտեսությունում փոխարժեքի և տնտեսական աճի կարճաժամկետ տատանումներին, իսկ գների կայունությունը

¹ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայք, www.cba.am:

ձևավորվում է արդեն մակրոտնտեսական որոշակի հաշվեկշռվածության ձեռքբերումից հետո¹:

Փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը ՀՀ կենտրոնական բանկին, սկսած 1994 թվականի երկրորդ կիսամյակից, թույլ է տվել նվազեցնել և կայունացնել գնաճի տեմպերը, իսկ 1998-2004թթ. միջին գնաճը կազմել է 2.4%, 2005-2007թթ. միջին գնաճը կազմել է 3.8%: Ըստ էության ՀՀ կենտրոնական բանկին, փողի ագրեգատների կառավարման ու վերջինիս վերաբերյալ թափանցիկության և հաշվետվելիության ապահովման միջոցով, հաջողվել է տնտեսության մեջ ապահովել մակրոտնտեսական կայունություն՝ այդ տարիներին արձանագրված արտաքին և ներքին տարբեր բնույթի ցնցումների դրսևորումների ներքո:

Սակայն այս ռազմավարության հաջող իրականացման շարունակական բնույթը կախված է մի շարք հանգամանքներից:

Նախևառաջ անհրաժեշտ է գնաճի և փողի ագրեգատների միջև կայուն կապի առկայություն, որպեսզի փողի ագրեգատների նպատակային ցուցանիշի ապահովումը բերի գնաճի նպատակային ցուցանիշին: Հակառակ պարագայում, եթե, օրինակ՝ հաճախակի խախտվում է փողի ագրեգատների նպատակային ցուցանիշը, գների կայունությանը հասնելու գերակայության ներքո, ապա ԿԲ-ի կողմից հայտարարվող դրամավարկային քաղաքականության ծրագրերը կորցնում են իրենց վարքը հասարակության մեջ: Իսկ վստահությունը դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման, այսինքն՝ գների կայունության ապահովման հիմնական պայմաններից է:

Կարևոր նախապայման է նաև ԿԲ-ի կողմից փողի ագրեգատների լիարժեք կառավարման հնարավորությունը: Սովորաբար կենտրոնական բանկերը հաջողությամբ կառավարում են փողի քաղաքի ցուցանիշը, սակայն դժվարություններ են առաջանում փողի զանգվածի կառավարման հարցում: Չարգացող ֆինանսական շուկաներ ու դոլարիզացիայի բարձր մակարդակ ունեցող երկրներում, որտեղ հնարավոր են վարկերի և ավանդների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև փողի զանգվածի կառուցվածքի, դոլարիզացիայի մակարդակի զգալի փոփոխություններ, էական տատանումների է ենթարկվում փողի նկատմամբ պահանջարկը՝ ունենալով կանխատեսելիության ցածր աստիճան: Այդ երկրներում ցածր է նաև տոկոսադրույքներից փողի պահանջարկի կախվածության առաձգականությունը, որը դժվարացնում է ԿԲ-ի կողմից փողի զանգվածի կառավարման գործընթացը: Նշված հիմնախնդիրների պայմաններում կենտրոնական բանկերը կանգնում են միջանկյալ նպատակի՝ փողի զանգվածի նպատակային ցուցանիշի հաճախակի խախտման խնդրի առջև՝ կրկին վտանգելով դրամավարկային ծրագրերի և ԿԲ-ի վարքը:

Աղյուսակ 1

Փողի ագրեգատների փոփոխությունը 2003 – 2007թթ. ընթացքում, մլն ՀՀ դրամ²

Ժամկետ	Երջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 *	Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 **	Արտարժույթով ավանդներ	M2X ***
2003	96569	30845	102414	10304	125718	130226	255944
2004	98569	33845	132414	13304	145718	140226	285943
2005	144311	57750	202061	22741	224802	140757	365559
2006	211469	83858	295328	46998	342326	143411	485734
2007	326016	132542	458558	102465	561024	130320	691343

* M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):

** M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները:

*** M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):

¹ Баядян А.А., Багдасарян А.М. Флуктуации валютных курсов и проблемы организации биржевой торговли валютой Армении// Известия государственного аграрного университета Армении. Ереван, 2005. – С. 120 – 124.

² ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ, 2003-2007 թթ.:

Փողի ագրեգատների ծրագրային ցուցանիշների խախտումների պատճառները ՀՀ-ում բազմաթիվ են. փողի ագրեգատների և գնաճի միջև անկայուն կապ, փողի պահանջարկի տատանողական վարքագիծ, արտաքին ցնցումային իրավիճակներ և հատկապես գնաճի վրա ոչ մոնետար գործոնների զգալի ազդեցություն:

ՀՀ բանկային համակարգում ընթացող կառուցվածքային փոփոխությունները, վարկավորման ծավալների աճի բարձր տեմպերը, դրամի շարունակական արժևորման պարագայում դոլարիզացիայի մակարդակի նվազումը, արտերկրից ստացվող տրանսֆերտների աճի բարձր տեմպերն իրենց էական արտացոլումն են գտել փողի պահանջարկի վրա՝ այն դարձնելով հաճախակի փոփոխվող և անկայուն: Արդյունքում փողի ագրեգատների արձանագրված աճերը խիստ փոփոխական ազդեցություն են ունեցել թե՛ սպառողական շուկայում պահանջարկ ստեղծելու, թե՛ խնայողությունների, թե՛ ներդրումների ձևավորման վրա: Փողի ագրեգատների և գնաճի միջև կապն անկայուն է հատկապես զարգացող շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ ֆինանսական ազատականացման գործընթացում, դեռևս ամբողջովին չկայացած ֆինանսական շուկայի պայմաններում, փողի պահանջարկը հաստատում չէ: Փողի պահանջարկի անկայունությունն առկա է անգամ զարգացած երկրներում:

Այսպիսով, փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը ենթադրում էր, որ գնաճի ցուցանիշը կապահովվի փողի ագրեգատների նպատակային մակարդակների ապահովման պարագայում, ապա ՀՀ-ում ներկայումս խիստ դժվարացել է գնաճի նպատակային ցուցանիշի և փողի ագրեգատների նպատակային ցուցանիշների համատեղ ապահովումը: Մեկն ապահովելու դեպքում խախտվում է մյուսը, և քանի որ ԿԲ-ի գլխավոր նպատակը գների կայունությունն է, ապա խախտվում են ագրեգատները: Մասնավորապես, 2005 թվականի ընթացքում արտարժույթի մեծածավալ ներհոսքի պարագայում դրամի փոխարժեքը դրսևորել է կայուն արժևորման վարքագիծ, ինչը հանգեցրել է դրամի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճի: Ստեղծված իրավիճակում, հաշվի առնելով դրամավարկային ցուցանիշների ծրագրային զգալի շեղումները, և այն, որ արդյունքում դրանք չեն հանգեցրել գնաճային էական ճնշումների (կիսամյակային 1.5% գնաճ՝ ծրագրված 4%-ի դիմաց), ԿԲ-ը տարվա երկրորդ կեսից վերանայել է դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակները՝ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն իրականացնելու նկատառումով: Ըստ վերանայված ծրագրի՝ փողի բազան տարեկան ճնշումով նախորդ տարվա համեմատ նախատեսվում էր ավելացնել 41.4%-ով, սկզբնական ծրագրի 8.9%-ի փոխարեն: Ընդ որում, այս հակասությունն ունենալու է շարունակական բնույթ, քանի որ ցածր մոնետարիզացիայի, շրջանառությունում կանխիկ դրամի մեծ տեսակարար կշռի և արտաքին ֆինանսական ներհոսքի պարագայում, էական տեղաշարժեր են սպասվում դրամի նկատմամբ պահանջարկի և՛ մակարդակում, և՛ կառուցվածքում: Այս եզրահանգման հիմքում ընկած են առավել զարգացած տնտեսություն ունեցող երկրների՝ վերը նշված դրամավարկային ցուցանիշների ներկայիս մակարդակները: Այն է՝ տնտեսության զարգացմանը զուգընթաց շարունակաբար նվազելու է դոլարիզացիայի մակարդակը, շրջանառությունում կանխիկի տեսակարար կշիռը և դրամի նկատմամբ պահանջարկի աճի տեմպը էապես գերազանցելու է ՀՆԱ-ի աճի տեմպը՝ ունենալով կանխատեսելիության ցածր աստիճան:

Այս իրավիճակում դրամական ագրեգատների նպատակադրումը չի կարող լինել վստահելի խարխիս, և ՀՀ ԿԲ-ը կանգնել է նոր ռազմավարության ընտրության խնդրի առջև՝ իրականացնելու փոխարժեքի կամ գնաճի նպատակադրման ռազմավարություններից մեկը:

Գնաճի նպատակադրման ռազմավարության տեսական հիմքը «Ժամանակային անհամապատասխանության» խնդրի լուծումներից մեկն է, որի հակիրճ ձևակերպումն է. «ներկայումս ապագայի համար արդյունավետ քաղաքականությունն այլևս օպտիմալ չէ, երբ գալիս է այդ ապագա ժամանակահատվածը»: Արտերկրյա փորձը ցույց է տալիս, որ նոր ռեժիմի ընդունումը բոլոր երկրներում ունի մեկ ընդհանուր պատճառ՝ դրամավարկային քաղաքականության նոր

անվանական խարսխի անհրաժեշտությունը: Այդպես է նաև ՀՀ պարագայում: Գնաճի նպատակադրման ռեժիմը ընդունում են նախկինում ինչպես փոխարժեքի կցման, այնպես էլ փողի ազդեցատների նպատակադրման ռեժիմը կիրառող երկրները:

Գնաճի նպատակադրումը դրամավարկային քաղաքականություն իրականացնելու մի ծրագիր է, որը բնութագրվում է գնաճի մեկ տարվա կամ որոշակի ժամանակահատվածի պաշտոնական ծրագրային ցուցանիշի (կամ միջակայքը) հրապարակային հայտարարմամբ՝ նշելով, որ ցածր և կայուն գնաճի ապահովումը դրամավարկային քաղաքականության առաջնային երկարաժամկետ նպատակն է¹:

Գնաճի նպատակադրման ռազմավարությունը գնաճի նպատակային ցուցանիշի սահմանում է, գնաճի կանխատեսում մույն ժամանակահատվածի համար, այնուհետև նպատակաուղղված քաղաքականության իրականացում՝ նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղումը վերացնելու համար: Գնաճի նպատակադրման ներքո դրամավարկային քաղաքականության փուլերի հաջորդականությունը հետևյալն է՝ տոկոսադրույքներ-գնաճի կանխատեսված մակարդակ-գնաճի նպատակային ցուցանիշ:

Ընդ որում գնաճի կանխատեսված մակարդակը ԿԲ-ի համար դառնում է միջանկյալ նպատակ կամ անվանական խարսխ, քանի որ այն կառավարելի է ԿԲ-ի կողմից, հասկանալի և չափելի է հասարակության համար ու հստակեցնում է դրամավարկային քաղաքականության ուղղությունները: Միաժամանակ գնաճի կանխատեսված մակարդակի կառավարումը իրականացվում է գործառնական նպատակի միջոցով:

Գնաճի նպատակադրման ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ պայմաններն են՝ ըստ ինստիտուցիոնալի՝ գների կայունությունը որպես ԿԲ-ի գլխավոր նպատակի սահմանում, գնաճի ցուցանիշի, միջակայքի և ժամանակային հորիզոնի ընտրություն, հայեցողական քաղաքականություն, քափանցիկություն և հաշվետվելիություն, գործառնական անկախություն, ըստ գործառնականի՝ գնաճի կանխատեսում, փոխանցման մեխանիզմի մասին հստակ պատկերացում, և ըստ մակրոտնտեսականի՝ զարգացած ֆինանսական շուկա, ֆիսկալ դոմինանտության բացակայություն, ներքին և արտաքին կայունություն:

Մակրոտնտեսական ներքին կայունությունը հիմնականում բնութագրվում է ցածր գնաճի և տնտեսական աճի կայուն տեմպերի առկայությամբ: ՀՀ-ում նշված երկու պայմանները բավարարված են, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 1998-2004թթ. միջին գնաճը կազմել է 2.4%, իսկ այդ տարիներին մշտապես արձանագրվել է տնտեսական աճ: Ընդ որում վերջին երեք տարիներին այն ունեցել է երկնիշ մակարդակ:

Բացահայտ է, որ, չնայած ներկայումս ՀՀ-ում առկա են արտաքին հաշվեկշռվածության բարելավման էական միտումներ, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասորդի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում անընդհատ նվազում է: Սակայն ՀՀ վճարային հաշվեկշռում էական տեսակարար կշիռ են կազմում մասնավոր տրանսֆերտները, որոնց աճի բարձր տեմպերը էական են եղել ընթացիկ հաշվի պակասորդի (դեֆիցիտի) նվազման և կայունացման գործընթացում:


Այս պարագայում, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, որտեղից ստացվում է այդ տրանսֆերտների մոտ 80%-ը, տնտեսական ոչ բարենպաստ զարգացումները կարող են իրենց ուղղակի ազդեցությունն ունենալ ՀՀ արտաքին հաշվեկշռվածության կայունության վրա: Այնուհանդերձ, վերջին տարիներին արձանագրված արտահանման աճի բարձր տեմպերը և օտարերկրյա ուղղակի ներդրումների աճի միտումները վկայում են, որ մոտ ապագայում վճարային հաշվեկշռից լուրջ ցնցումներ չեն ակնկալվի:

Գնաճի նպատակադրումը դրամավարկային քաղաքականության համար բավականին խոստումնալից ռազմավարություն է, և կանխատեսվում է, որ այն ստանդարտ մոտեցում կդառնա

¹ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի զեկույցը ՀՀ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ, Երևան, 2006 թ.:

շատ ԿԲ-ների համար, և յուրաքանչյուր երկրի կառավարություն կգնահատի այն որպես արդյունավետ ուղի:

Նոր ռազմավարության ընտրության հետ առաջարկվում է հետևյալ գնաճային հայեցակարգը՝



ԱՐՄԵՆ ԱՐՅԱՆ

ՀՀ ՄԱՍԻՔԻ ՄԱՍԻՔԻ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐՋԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՆ

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնահարցերը ներկայումս բազմաթիվ երկրների կառավարությունների ուշադրության կենտրոնում են: Այս ոլորտի հիմնահարցերով են զբաղվում նաև մի շարք հանձնաժողովներ, կազմակերպություններ ու ասոցիացիաներ, որոնք բարձրացնում են ոլորտում առկա խնդրահարույց հարցերը, ներկայացնում իրենց առաջարկությունները, լուծման տարբերակները: Նշված ոլորտի ամենաբարդ հիմնահարցերից են հարկային համակարգին առնչվողները, քանի որ ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության բարձրացման հիմքերն առաջին հերթին հարկավոր է փնտրել արդյունավետ գործող հարկային համակարգում:

Այս հոդվածում, համաշխարհային փորձի և Հայաստանի հարկային օրենսդրության և փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեությունը բնութագրող մի շարք ցուցանիշների համադրմամբ, փորձենք ներկայացնել հարկային համակարգի հիմնական թերությունները:

Փոքր ու միջին ձեռնարկությունների համար հարկային համակարգի բարձր ծախսերի և զարգացման խոչընդոտների հիմնական պատճառ են՝

- հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները,
- հարկային համակարգի ոչ ամբողջականությունը և համակարգավածությունը,
- հարկային վարչարարության տարբեր ձևերի գոյությունը,
- հարկային օրենսդրության ոչ պարզությունը,
- հարկային վճարումների կարճ և ոչ ճկուն վերջնաժամկետները,
- հարկային խորհրդատվության ծախսերը,
- գրանցման գործընթացների բարդությունը: